



*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ*

*ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՎԱՐԻ 8-Ի
ՕՐԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԻԾ*

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

2022 թվականի փետրվարի 08-ին ժամը 15:00-ին Վաղարշապատ համայնքի ավագանու նստավայրում՝ քաղաք Էջմիածին, Մ.Մ.Մաշտոցի փողոց 0 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի առաջին նիստը, որին մասնակցում էր Վաղարշապատ համայնքի ավագանու 27 անդամ, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի առաջին նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Նիստն արձանագրում է Գ.Հարությունյանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության և համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում է առցանց հեռարձակմամբ:

Մինչ օրակարգի հարցերին անցնելը համայնքի ղեկավարը ներկայացրեց «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու անդամ ընտրված Անդրանիկ Կարապետի Կարապետյանի կողմից 2022 թվականի հունվարի 27-ին ներկայացրած ավագանու անդամի պաշտոնից հրաժարականի դիմումը:

Համայնքի ղեկավարը հայտնեց, որ Անդրանիկ Կարապետի Կարապետյանը ավագանու անդամի պաշտոնից հրաժարականի դիմումը անձամբ է ներկայացրել համայնքի ղեկավարին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 4-րդ և 5-րդ մասերի պահանջներին համապատասխան: Ներկայացված դիմումի վերաբերյալ կազմվել է արձանագրություն՝ Վաղարշապատ համայնքի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Արձանագրությունը և հիմնավորող փաստաթղթերը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացվել են թիվ 14 տարածքային ընտրական հանձնաժողով:

Հանձնաժողովի 03.02.2022թ. «Վաղարշապատ համայնքի ավագանու անդամ ընտրված և լիազորությունները դադարած ավագանու անդամի մանդատը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկանծուին տալու» թիվ 1 արձանագրության համաձայն Անդրանիկ Կարապետյանի լիազորությունները վաղաժամկետ դադարել են և մանդատը տրվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկանծու Ադասի Սանասարի Բաղդասարյանին:

Նիստը վարողը՝ համայնքի ղեկավարը, ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցը և առաջարկեց քննարկել ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 27 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 27

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի արտահերթ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցը, այն է՝

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

2. ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՅՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04 ՄԱՅԻՍԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 25 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼ ՄԱՍԻՆ

3. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻԶՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 80 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 15 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՌԱՆՑ ՄՐՅՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունեց թիվ 35 որոշումը:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Գրիգոր Հարությունյանը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի նորընտիր ավագանու խմբակցությունների ստեղծման մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները հերթագրվեցին: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունները՝ Սևակ Խաչատրյան և Զիվան Աբրահամյան:

Հարց: Սևակ Խաչատրյան. Արդյո՞ք ավագանու խմբակցություններին հատկացվելու են աշխատասենյակներ:

Պատասխան: Դ. Գասպարյան. Համապատասխան աշխատասենյակները նախապատրաստվում են:

Հարց: Զիվան Աբրահամյան. Դահլիճի մեծության պատճառով լավ չեն լսվում քննարկումները և ուղիղ հեռարձակման ձայնային խնդիրներ կան:

Պատասխան: Դ. Գասպարյան. Նշված հարցերը կկարգավորվեն, կունենանք ավելի հարմարավետ դահլիճ, իսկ տեխնիկական խնդիրները կլուծվեն:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո, նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 27 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 27

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 36 որոշումը:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Գրիգոր Հարությունյանը:

Ներկայացնելով հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու և Էջմիածին համայնքի ավագանու 04 մայիսի 2016 թվականի թիվ 25 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման նախագիծը:

Համայնքի ղեկավարը նշեց, որ շուտով համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը կդրվի հանրային քննարկման և հուսով է, որ համայնքի բնակիչները ակտիվ մասնակցություն կունենան այդ քննարկմանը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 27 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 27

դեմ – 0

ձեռնպահ – 0

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 37 որոշումը:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Գրիգոր Հարությունյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու և էջմիածին համայնքի ավագանու 25 դեկտեմբերի 2014 թվականի թիվ 80 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման նախագիծը:

Համայնքի ղեկավարը նշեց, որ կարող է ստեղծվել նախաձեռնող խումբ կամ կարճ հաղորդագրությունների միջոցով ապահովվի քաղաքացիների մասնակցությունը տարբեր հարցերի քննարկմանը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 27 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 27
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 38 որոշումը:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու և էջմիածին համայնքի ավագանու 12 փետրվարի 2019 թվականի թիվ 15 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները հերթագրվեցին: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն և ազգանունները՝ Սևակ Խաչատրյան:

Հարց: Սևակ Խաչատրյանը առաջարկեց խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետում պարզապես թողնել կրթական և մշակութային հարցերի ԽՍ, ինչպես նաև երկրորդ առաջարկ ներկայացրեց և նշեց, որ խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգում նշված է յուրաքանչյուր խորհրդակցական մարմնում կարող է մասնակցել երեք ավագանու անդամ, առաջարկում է նշել յուրաքանչյուր խմբակցությունից մեկական ավագանու անդամ:

Պատասխան: Դ. Գասպարյան. առաջին առաջարկն ընդունվեց և համապատասխան փոփոխությունը կատարվեց կարգում, իսկ երկրորդ առաջարկը կքննարկվի, դրա համար հայտարարվում է 10 րոպե ընդմիջում:

Ընդմիջումից հետո Սևակ Խաչատրյանի առաջարկները դրվեցին քննարկման: Քվեարկության արդյունքում առաջին առաջարկը՝ 2 ձեռնպահով ընդունվեց, իսկ երկրորդը՝ 15 դեմ 12 կողմ քվեարկության արդյունքով չընդունվեց: Այսպիսով համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգում կատարվեց մեկ փոփոխությունը:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո, նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 27 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 15
դեմ – 12
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 39 որոշումը:

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Գրիգոր Հարությունյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը» հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 27 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 27
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 40 որոշումը:

Օրակարգի 6-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Դավիթ Բադալյանը:

Ներկայացնելով ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի փոփոխությունը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 27 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 24
դեմ – 2
ձեռնպահ – 1

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 41 որոշումը:

Օրակարգի 7-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Դավիթ Բադալյանը:

Ներկայացնելով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները հերթագրվեցին: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունները՝ Սևակ Խաչատրյան և Զիվան Աբրահամյան:

Հարց: Սևակ Խաչատրյան. Եթե քաղաքացին ջերմոց չի կառուցում, այդ դեպքում ինչ է լինելու:

Պատասխան: Դ. Գասպարյան. Եթե տրված թույլտվությունը ժամանակին չի կատարվում այն ուժը կորցրած է համարվում և 10 տարի դրա նպատակային նշանակությունը չի կարող փոփոխվել:

Հարց: Զիվան Աբրահամյան. Եթե քաղաքացին ջերմոցի փոխարեն կառուցում է այլ շինություն:

Պատասխան: Դ. Գասպարյան. Այա դա կդիտվի որպես ինքնակամ շինություն և դա կունենա իր իրավական հետևանքները:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո, նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 27 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 27
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 42 որոշումը:

Օրակարգի 8-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Դավիթ Բադալյանը:

Ներկայացնելով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 27 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 27
դեմ – 0

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 43 որոշումը:

Օրակարգի 9-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Դավիթ Բադալյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասն առանց մրցույթի կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 27 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 27
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 44 որոշումը:

Օրակարգի 10-րդ հարցի առթիվ՝ համայնքի ղեկավարը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական երկրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 27 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 27
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 45 որոշումը:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված: